ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 544-Ա

01 հոկտեմբերի 2025 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ Ս. ՔՈՉԱՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ և 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 60-րդ կետի պահանջը, ինչպես նաև Անուշ Մարտիրոսյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Անուշ Մարտիրոսյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործված մասից 10 աշխատանքային օր՝ 2025 թվականի հոկտեմբերի 1-ից 2025 թվականի հոկտեմբերի 14-ը ներառյալ:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Անուշ Մարտիրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում

վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների և պարտականությունների կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռիտա Հասասյանին (առանց վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

01.10.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ